ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՅՈՒՔՈՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երևան 0015, Սուրբ Գր. Լուսավորիչ 9

հեռ. (+374 11) 400 400, էլ. փոստ՝ info@ucom.am

Ինտերնետային կայք՝ www.ucom.am

Հաշվետվություն թիվ 3, 18.05.2020թ.

1. Սույն թվականի ապրիլի 9-ին Ընկերության գլխավոր տնօրեն Հայկ Եսայանը ներկայացրեց իր զբաղեցրած պաշտոնից ազատման դիմում, որին հաջորդիվ աշխատանքից ազատման դիմումներ ներկայացրեցին Ընկերության ղեկավար անձնակազմն ու մի շարք աշխատակիցներ: Ինչից հետո, սույն թվականի ապրիլի 14-ին Ընկերության տնօրենների խորհուրդը արտահերթ նիստ գումարեց, որի ժամանակ որոշում ընդունվեց Հայկ Եսայանին ազատել զբաղեցրած պաշտոնից և Ընկերության գլխավոր տնօրեն նշանակել Արա Խաչատրյանին: Նույն նիստի ժամանակ Ընկերության խորհրդի նախագահ ընտրվեց Գուրգեն Խաչատրյանը:

2. Նոր գլխավոր տնօրենի նշանակմանը հաջորդեց Ընկերությունը անհրաժեշտ մասնագետներով համալրելու գործընթացը և այս պահին բոլոր առանցքային պաշտոնները համալրված են արհեստավարժ աշխատակիցներով, ովքեր լիարժեք վերահսկում և իրականացնում են Ընկերության բոլոր գործառույթները:

Սույնով հավաստիացնում ենք, որ Ընկերությունը շարունակում է իր բնականոն գործունեությունը և կատարում է իր պարտավորությունները բաժանորդների, բոլոր գործընկերների և շահառուների հանդեպ:

3. Ընկերության իրավանախորդ «Յուքոմ» ՍՊԸ-ի և «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի 100 % բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող «Վիմպել-Կոմունիկացիի» ՀԲԸ-ի միջև «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի 100 % բաժնետոմսերն Ընկերության կողմից ձեռք բերելու մտադրության մասին նախնական բանակցությունների արդյունքում 30.12.2019թ.-ին դիմում է ներկայացվել ՀՀ Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով՝ համակենտրոնացման թույլտվություն ստանալու համար:

«Վեոն Արմենիա» ՓԲԸ-ից ստացվել է ծանուցում՝ գործընթացներն ավարտելու վերաբերյալ: Անհրաժեշտ է դեռևս մի քանի քննարկում, հասկանալու համար արդյոք՞ ամբողջությամբ չեղարկվել է «Վեոն Արմենիա» ՓԲԸ-ի բաժնետոմսերն Ընկերության

կողմից ձեռք բերելու գործընթացը թե՞ ոչ: Նշվածի մասին Ընկերությունը սահմանված կարգով կներկայացնի համապատասխան հաշվետվություն:

4. 11.05.2020թ.-ին և 12.05.2020թ.-ին լուծվել են համապատասխանաբար՝ AMUCOMB21ER6 և AMUCOMB22ER4 ԱՄՏԾ-երով պարտատոմսերի՝ «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում պարտադիր գնանշումներ կազմակերպելու մասին Ընկերության և «ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ-ի միջև 16.08.2019թ.-ին կնքված պայմանագրերը: